186. Տեղն անհայտ, բաղում ենք Քոթուկից

(էջ 75—76)

Հ ՉԿԴ Մ 1514

Ի թվին ՉԿԴ։ Կամաւն ամենակալին Այ, ես ամիր Բանապո և մայրն իմ պարոն Խութլղան միաբանեցաք սբ Ածածնին, տվաք զմեր ձեռացատունկ այգին յիշատակ մեզ և եղբաւրն իմ Ածապովին, որ տարաժամ մահուամբ փոխեցաւ առ Քս։ Եւ առաջնորդ(ք) սբ ուխտիս խոստացան տարին Դ պատարագ կատարեն ի տաւնի ճրագալուցին առաջնորդութեամբ Ղուկաս Եպսին։ Ով հանել ջանայ իմոց կամ աւտարաց, եղբարց կամ եղբայր որդաց. նա մեր մեղացն սր լինի, ՅԺԸ հայրապետաց նզոված լիցի։ Կատարողքն աւրհնին Այ և միաբանք սբ ուխտիս Դ պատարագ տաւնին ճրագալուծին անխափան։ Եւ Քի փառք յաւիտեանս, ամէն։

187. Վանքի բակում, Գուրգեն Բագրատունի թագավորի գերեզմանից դեպի հս աե գտնվող փոքր գավթում։ Խաչքարի ճակատին Քաղում ենք Ջալ-ից։

Հ ՈԿԴ Մ 1215

Հրատարակված է՝ Ջալ 10

Կանգնեցաւ խաչս ամենափրկիչ օգնական աշխարհիս, ի թվին հայոց ՈԿԴ։

188. Տեղն անհայտ

Հ 428 Մ 979

Հրատարակված է՝ Ջալ 43, Դրիմ 48

Քաղում ենք Քոթուկից էջ՝ *46—50*

Կամաւքն ամենազաւրին Այ, հաւր և որդւոյ և սուրբ հոգւոյն. ես, Սմբատ Բագրատունի թագաւոր Հայոց, թոռն տիեզերակալ և մեծ թագաւորին Սմբատայ, որդւոյ թագաւորին Աշոտոյ Ողորմածն կոչեցելոյ, եկի ի տեսութի սբ ուխտիս Սանահնիս, զոր շինեալ էր թագաւորն Աշոտ և Խոսրովանոյշ թագուհին՝ հայրն և մայրն իմ, և տեսի զի Ածաշէն և թագաւորաշէն էր, վասն որոյ և սիրեցի, և սիրոյ նըշան արարեալ հաստատեցի զսա աթոռ եպիսկոպոսութե, և սահմանեցի զվիճակ սբ Ածածնիս. և սբ հայրս վանանց զեսայի ետու առնել եպիսկոպոս մեծի հայրապետին Հայոց Խաչկայ, և անդառնալի հրամանաւ մերով և գրով ետու վիճակ և երկիրս զայս Սանահնիս. զամենայն երկիրն Տաշրաց՝ զվերին և զներքին, մինչ ի լեառն՝ բաղում յայս կոյս և յայն կոյս, մինչ ի սահմանս Գուգարաց աշխարհին և մինչ ի սահմանս Տըփխաց և Վրաց, և ի սահմանս Նիգ գաւառի, և մինչ ի սահմանս Կայենոյ, և զսահմանս Ծաղկոցաձ, մինչ ի սահմանս տան Շիրակայ։ Եւ՝ Սմբատ թագաւոր, իմ թագաւորական իշխանութիւն և կաթուղիկոսաց հրամանաւքն զաթոռս զայս և զվիճակս հաստատեցի ի Սանահնիս սբ Ածածնիս, որ էր գերեզմանատուն նախնեաց մերոց, վասն յիշատակի հաւր իմոյ և մաւր՝ թագաւորին Աշոտոյ և թագուհւոյն՝ Խոսրովանուշին, ինձ կենաց և յետ մահու ի զարդ սբ Ածածնիս, որպէս զհայրն իմ և զմայրն նորոգեալ էին և զարդարեալ զարդարանաւք, և յոլով գեղորէիւք և հայրենեօք՝ սարով և ձորով։